

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԸ՝ «ՄՇԱԿ»-Ի ԹՂԹԱԿԻՑ

XIX դ. 70-ական թթ. արևելահայ և արևմտահայ հատվածների հոգևոր-մշակութային, ինչպես և հասարակական շփումներն ընդլայնվեցին աննախընթաց չափերով: Հատկապես միջազգայնացած Հայկական հարցի զարգացումներն ազգը համախմբում էին համազգային գաղափարի շուրջ, որի հիմքում ընկած էր օսմանյան լծից արևմտահայերի ազատագրության ձգտումը: Վերոհիշյալ՝ ազգային, մտավոր-մշակութային և գաղափարական մերձեցումներին հայության երկու հատվածներում և գաղթօջախներում մեծապես նպաստեցին առաջավոր հասարակական գործիչները, մամուլն ու հրապարակախոսությունը:

Արևմտահայ և արևելահայ հատվածների իրական համագործակցությանը որակական նոր ազդակներ հաղորդեցին բարեգործական, հասարակական ընկերությունների մեջ համաձայնեցված գործողությունները: 1880 թ. Կ. Պոլսում «Միացյալ ընկերությունք հայոց» անվամբ, միավորվեցին մինչ այդ անջատ գործող երեք կրթական ու մշակութային բնույթի՝ «Արարատյան», «Դպրոցասիրաց-Արևելյան» և «Կիլիկյան» ընկերությունները: «Միացյալ ընկերությանց» հիմնադիր անդամների մեջ ակտիվ գործունեություն էր վերապահված Արփիար Արփիարյանին՝ հատկապես արևելահայ գործիչների, և, ամենից առաջ, Գր. Արծրունու և Ա. Հովհաննիսյանի ու նրանց համախոհ թիֆլիսահայ մտավորականության հետ մշակութային կապերն ամրապնդելու ասպարեզում:

Արևելահայ առաջադիմական մամուլի և հրապարակախոսների հետ ունեցած փոխադարձ առնչությունների ու

շփումների հետևանքով, որոնք իրականանում էին արևմտահայ պարբերականներին արևելահայ հեղինակների աշխատակցության, ինչպես և արևելահայ պարբերականներին արևմտահայ հեղինակների աշխատակցության գործընթացում¹: Մեր կարծիքով՝ այս վերջին դեպքում ոչ մի թղթակից կամ հրապարակախոս չի ունեցել այնպիսի խոշոր, ծավալուն և ազդեցիկ դերակատարություն, որպիսին Ա. Արփիարյանին էր:

Ա. Արփիարյանը «Մշակին» թղթակցել է 1878 թվականից՝ միանգամից լայն ընդունելություն գտնելով արևելահայ ընթերցող շրջաններում և՛ իր տպավորիչ ու իրապատում շարադրանքով, և՛ ժանրային թարմությամբ (քրոնիկի ժանրի ընձեռած լայն հնարավորություններով) ու ամենակարևորը՝ անկեղծությամբ: «Մշակ»-ի աշխատակից Ա. Արփիարյանը ներկայացնում էր ոչ միայն պոլսահայ իրականությունն իր ազգային մարմիններով, պատրիարքով ու պատրիարքարանի դիմագծով, այլև արևմտահայության հանդեպ Բարձր Ղռան վերաբերմունքը, Արևմտյան Հայաստանի կացության պատկերները, Հայկական հարցի հանդեպ եվրոպական պետությունների և Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ ընթացող տեղաշարժերը, ինչպես նաև ազգային-մշակութային լայնախոհ շերտին առնչվելու ոչ միայն հոգեբանական, այլև առարկայական խնդիրը, նոր լսարանին հաղորդակցվելու, լրատվությունն անկաշկանդ

¹ Բավական է միայն հիշել դեռևս 1860–1870-ական թթ. «Մեղու Հայաստանի», «Կռունկ հայոց աշխարհին» և այլ պարբերականներում արևմտահայ թղթակիցների հոդվածները՝ նվիրված արևմտահայերի Ազգային սահմանադրությանը, Ջեթունի 1862 թ. ապստամբությանը և այլ հիմնահարցերի: Հայկական հարցի միջազգայնացումն էլ ավելի լայն ասպարեզ էր բացում երկուստեք լրատվության առջև: Նույն կերպ, 1880-ական թթ. «Արևելք»-ում ցարիզմի հակահայկական քաղաքականության համարձակ քննադատությամբ հանդես էին գալիս արևելահայ թղթակիցները:

ներկայացնելու հանգամանքը, որ «Մշակ»-ում Արփիարյանին լուրջ հնարավորություններ էր ընձեռում:

Արևմտահայ թղթակցի կայուն և մշտական ներկայությունը «Մշակում» ի հայտ էր բերում հայության զույգ հատվածների մտավոր ներթափանցումների նոր որակը 1870-ական թթ. վերջերից և հատկապես 1880-ական թթ.: Այս իրողությունը լրջորեն գիտակցվում էր արևմտահայ մտավորականների կողմից, որոնց կարծիքն էր արտահայտում Գր. Զոհրապը, երբ գրում էր. «Բայց ինչ որ ալ ըլլա, սա ճշմարիտ է, որ լրագրությունը հառաջդիմելու էր մեր մեջ. մասնավոր թղթակից ուղարկելու նախաձեռնությունն հզոր ապացույց մըն է այս մասին»²:

Ավելացնենք, որ, որպես «Մշակի» թղթակից, Արփիարյանն առաջնորդվել է «Արևելքի» և «Մասիսի» տիրապետող այն մտայնությամբ, որ սահմանից այն կողմ գտնվող ազգակիցներին պետք է ծանոթացնել արևմտահայ կյանքին, նրա հրատապ խնդիրներին և, այսպիսով, հող նախապատրաստել դրանց համագգային լուծումների համար: Նա մեծապես նպաստեց այդ գործին՝ հանդես գալով որպես «նոր լրագրության» սկզբունքների արտահայտիչը արևելահայ մամուլում: Ճշմարտացի է Տ. Կամսարականը, երբ բնութագրելով այդ լրագրության դեմքերին, նկատում է, որ 80-ականների այդ սերունդը «նոր համոզումներով, նոր սկզբունքներով կնետվեր լրագրական ասպարեզը... հայ լրագրության տալու այն ազնվությունը, և արժանապատվությունը, զոր հին լրագրողները չատեր չեն կրցած պահել՝ անձնական կիրքե և շահե մղված»³:

Հայկակ ստորագրությամբ Ա. Արփիարյանի թղթակցությունները «Մշակում» արևելահայ ընթերցողի առջև բացում են

² Ապոյանյան Ա., Անհետացող դեմքեր, Գրիգոր Զոհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 53:

³ Հրանտ Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 251:

արևմտահայության և նրա կյանքի անժանոթ բազմաթիվ ծալ-քերը: Այս թղթակցությունների լուսաբանությունն ընթանում է երկու ուղղությամբ, երկուսն էլ կարևոր և հագեցած ճանաչողական մեծ լիցքով, այն է՝ պոլսահայ համայնքը և նրա հասարակական ու մշակութային կյանքը, և, մյուս կողմից, Արևմտյան Հայաստանի իրական կացությունն ու պատկերը: Լրագրական (լրատվական) և հրապարակախոսական լուսաբանումների այս անընդհատ, լարված հետաքրքրությունն առաջացնող շարքն էր, որը, ինչպես իրավացիորեն նկատում է Հ. Օշականը, խորը կնիք թողեց արևելահայ հանրության քաղաքական մտքի զարգացումների վրա: «Մշակի» մեջ իր քրոնիկները, գրում է նա, թերևս, մուտք կը կազմեն մեր նոր պատմության: 1878-են Հայկակ ստորագրությամբ հոդվածներն էին, որ արևմտահայերու շուրջ ծնունդ տվին այն հզոր, անսովոր ... հետաքրքրության, որմե կգատվին այն մեծ հոսանքները նոր հայության»⁴:

Հայկակի թղթակցություններում, որ հաճախ համապատասխան գրականության մեջ հիշվում են «քրոնիկներ» անվանումով, Արփիարյանը բացահայտում է Արևմտյան Հայաստանի իրական պատկերը՝ իր հարստահարվող, իրավագուրկ հայ բնակչությամբ, կենցաղով, բարքերով, առօրեական անզարդ մանրամասերով ու կենսական խնդիրներով: Հայկակը ո՛չ գունազարդում է այս պատկերները, ո՛չ էլ շրջանցում սուր անկյունները: Նրա գրիչը կաշառում է գնդաճաճ ընթերցողին իր անկեղծությամբ ու անմիջականությամբ:

Ահա «Մշակին» ուղղված մի թղթակցություն, որ մերկացնում է թուրքական իշխանությունների և քրդական վերնախավի համագործակցությունը՝ հայերին կեղեքելու և նրանց հան-

⁴ Օշական Հ., Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 5, Երուսաղեմ, 1952, էջ 22:

դեպ գործադրվող բռնություններն օրինականացնելու գործում: Հայկական իր նյութը շարադրում է փաստական համոզիչ տվյալներով, նրա դատողությունները բխում են իրական դիտարկումներից, ընթերցողին մղում էլ ավելի հիմնավոր եզրակացությունների, որ հուշում է հեղինակը: «Քյուրդ Իսակ բեյը, — գրում է Հայկակը, — 50-են ավելի մարդասպանություն ըրած է և նոր ամբաստանությամբ մը հարկ կըլլա, որ դատարանին ներկայանա, երբ ներս կը մտնե, նախագահը ոտքի կելլե և ընդառաջ կերթա մա և յուր աթոռը կը բազմեցնե, ամբաստանողներն այս տեսարանին առաջ գլուխնին կախած դուրս կելլեն»⁵: Հայկակի թղթակցություններում բազմաթիվ օրինակներով հաստատվում է, որ սկսած 1880 թ. օսմանյան կառավարությունը բարենորոգումների մասին եվրոպական տերությունների հարցապնդումներին պատասխանում է հայերին հարստահարելու և թշվառացնելու ամենուրեք կիրառվող քաղաքականությամբ: Կարինի գյուղերից մեկում հարկահավաք ոստիկանները լլկում են տեղի հայ բնակիչներին և ոտնահարում նրանց մարդկային պատիվն ու արժանապատվությունը, իսկ իշխանությունները խնամքով թաքցնում են այդ չարագործությունը⁶: Գավառի հայությունը մնացել էր անպաշտպան ու անօգնական և նրա այդ վիճակը էլ ավելի վատթարացնելու նպատակով, ինչպես գրում է Հայկակը, օսմանյան կառավարությունը դիմում է նոր միջոցների: Այդպիսին է պատրիարքարանի գործառույթները գավառներում ըստ հնարավորին սահմանափակելու, գավառներն առանց վիճակավոր առաջնորդների, ուրեմն՝ անտեր թողնելու նենգ գործելակերպը: Կառավարությունը, գրում է Հայկակը, «մեր պատրիարքարանը բոլորովին փճացնելու համար գաղափար ունի Հայաստանի առաջնորդներին կամաց-կամաց ան-

⁵ «Մշակ», 15 մարտի 1880 թ.:

⁶ Տե՛ս նույն տեղում, 23 ապրիլի 1883 թ.:

կախ ընել պատրիարքարանե և Պոլսո պատրիարքը պարզապէս Պոլսո աթաքնորդ մը նկատել»⁷: Ավելին, թուրքական իշխանություններն Արևմտյան Հայաստանը բնակեցնում էին Բալկաններից գաղթեցրած մահմեդականներով⁸:

Արևմտյան Հայաստանի հայ բնակչության կացության, նրա հանդեպ օսմանյան պետության վարած վայրագ քաղաքականության ցայտուն օրինակները իրենց անընդհատ զգացնել են տալիս 1880—1890-ական թթ. Հայկակի անաչառ և շիտակ լրատվության մեջ, որով և մի հայտնի չափով պայմանավորված է դրանց հասարակական մեծ ներգործությունը «Մշակի» ընթերցողների շրջանում:

Նպատակադրվելով լայն հենքով լուսաբանել պոլսահայ հանրային կյանքը՝ Արփիարյանը ուշադրության կենտրոնում էր պահում ազգային մարմինների գործունեությունը: Այն ներկայացվում է և՛ քննարկված հարցերի, և՛ դրանց լուծման ձևով և, մյուս կողմից, Ազգային ժողովի անդամների և, առհասարակ, ազգային գործիչների բնութագրերով: «Մշակում» Հայկակը տալիս է Մ. Աղաբեկյանի, Մ. Խրիմյանի, Ն. Վարժապետյանի, Ստ. Փափագյանի, Հ. Մերեմ-Գուլիի, Հ. Նուրյանի և մյուսների թուփով դիմաստվերները: Դրանք շատ ավելի հպանցիկ են, քան «Մասիսում» Ա. Արփիարյանի «Օրվան կյանքը» խորագրի ներքո տպագրված քրոնիկներում, բայց և որոշակի պատկերացում են տալիս նշված գործիչների մասին: Արփիարյանը համառոտ է իր բնութագրերում, սակայն այդ ձևի մեջ էլ կարողացել է ցայտուն գծեր հայտնաբերել այս կամ այն գործչի դիմանկարում: «Պ. Մարկոս Աղաբեկյան այն հայերեն է, որք միայն խոսքով ազգասեր չեն: Ազգի համար զոհել անձնական շահը, և խեղճ ըլլալ, ահա առաքինություն մը, որուն համար

⁷ Տե՛ս նույն տեղում, 20 հուլիսի 1882 թ.:

⁸ Տե՛ս նույն տեղում, 2 դեկտեմբերի 1883 թ.:

շռայլությամբ չենք կրնար պարծիլ».⁹ – գրում է Արփիարյանը Ազգային ժողովի երեսփոխանի մասին⁹: Մ. Խրիմյանը Հայկակի գրչի տակ հանդես է գալիս իր մեծ հայրենասիրությամբ՝ իբրև անառարկելի հեղինակություն ամբողջ ժողովրդի, նույնիսկ իշխանությունների աչքին: Նրա նկարագրում դարձյալ բնութագրման չափանիշն ազգասիրությունն է ու վայելած ժողովրդականությունը: «Խրիմյան սրբազան լավ գիտե, – գրում է նա, – ինչ զոհողություններ ընդունելու է, ինչպես գործելու է հաշտ պահելու համար ազգին ընդհանրական շահերը վանեցվոց շահերուն հետ (որպես Ազգային ժողովի երեսփոխան – Գ. Ս.) և պետք է կատարյալ վստահություն ունենանք Խրիմյան սրբազանի ոգվոյն և մտքին վրա»¹⁰: Անձնավորություններին բնութագրելիս Արփիարյանը հաճախ անդրադարձ է անում անցյալի իրողություններին՝ անցյալի պատկերացումներն առավել ընդարձակելու նպատակով: «Ոչ ոք Ներսես և Խրիմյան սրբազաններու չափ այդ սերը (ժողովրդի – Գ. Ս.) կվայելե, – գրում է նա: – Ասիկա այնպես ստույգ իրողություն մ'է, որ տարակույսի տեղի չը ձգեր:

Ամեն տեսակ զրպարտությամբք կուզեն քողով մը սքողել այս երկու հսկա անձնավորությունները: Մինչև իսկ խիղճ չըրին կեղծուպատիր դարձվածքներով արատավորել «Մասիսի» միջոցով Ներսես սրբազանի անբիծ և անարատ բարոյականը»¹¹:

Հայկակի խոսքը ստանում է երգիծական սրություն և շեշտեր, երբ ներկայացնում է Ազգային ժողովի արգահատելի անդամներին: Մի քանի ժլատ, բայց ընդհանրացնող որակումների շնորհիվ Հայկակն ընթերցողին օգնում է արագորեն ընկալելու տվյալ նկարագիրը: Այդպիսին է ոմն Պետրոս Միսաքյան, որ

⁹ «Մշակ», 3 հուլիսի 1882 թ.:

¹⁰ Նույն տեղում, 1883, 3 նոյեմբեր:

¹¹ Նույն տեղում, 3 հուլիսի 1883 թ.:

«Խարբերդեն ընտրված է, վասնզի ամենեն շատ ավելի չարիք Խարբերդին հասուցած է: Ակնեցի, թե Խարբերդցի՝ վաշխառու փաստաբան: Փաստաբանը վաշխառություն կընե... Միսաքյանի երևելի գործերն են պաշտպանել տաճիկ և քուրտ այն պեյերը, որք այնքան անիրավաբար կը կեղեքեն խեղճ հայ գյուղացիները»¹²: Նույնչափ խոստուն է Ազգային ժողովի ատենապետ Բժիշկ Թիրյաքյանին բնութագրող վրձնահարվածը. «Ատեն մը հայերենի դասատու էր և դեռ հետքը մնացած է, երբ ժողովի մեջ բան մը կարդա, կարծես տերտեր մ'է, որ Ավետարան կը կարդա»¹³: Հայկակը գրեթե սպառիչ նկարագրում է Ազգային ժողովի շատ անդամների, նաև՝ այդ ժողովի քննարկած հարցերը՝ միշտ իր ակտիվ վերաբերմունքով նպաստելով ընթերցողի կողմնորոշմանը:

Հայկակի թղթակցություններում բավական տեղ է տրված հայերի հանդեպ Բ. Դռան տնտեսական քաղաքականության մերկացմանը: Հատկապես հետաքրքիր են, այս առումով, 1880-ական թթ. սկզբների թղթակցությունները, որոնք ընդգրկում են Հայկական հարցը կոծկելուն ուղղված Բ. Դռան գործողությունների ժամանակաշրջանը՝ Բեռլինի վեհաժողովից հետո: 1880-ի սկզբներին Բարձր Դուռը առաջին հարվածն ուղղեց հպատակների խարխլուն տնտեսական կայունությանը՝ չրջանառության մեջ դնելով արժեզուրկ թղթադրամներ: Դրանք մեծ քանակությամբ գտնվում էին հայերի ձեռքին, որոնք, խաբվելով կառավարության խոստումներից, թղթադրամի դիմաց տվել էին հնչուն ոսկի: Դրան հետևել էր այսպես կոչված «մեթալիկի» արծաթի և պղնձի համաձուլվածքով դրամի արժեզրկումը, մինչդեռ հենց դրանով պետք է վճարվեին տուրքերը. հնչուն ոսկու և «մեթալիկի» արժեքների տարբերությունը,

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

այսպիսով, պետք է վճարեին հարկատուները: «Խեղճ գյուղացիները, հայ բեռնակիրները, արհեստավորները, ամենքն ալ մեկ օրվա մեջ իրենց ունեցածին կեսը կը կորսնցնեն»,- գրում է Հայկակը¹⁴:

«Մշակի» թղթակցի լրատվության մեջ շարունակաբար լուսաբանվում է քրդական հարստահարությունների թեման: Սեբաստիայում, Մուշում, Բաղեշում, Կարինում խարբերդում և այլուր քուրդ բեյերը, միացած իշխանությունների հետ կամ նրանց թաքնված համաձայնությամբ, կեղեքում էին հայ գյուղացիներին, ինչը Հայկակը ցույց է տալիս կոնկրետ փաստերով: Այս կերպ նա հիմնավորում է այն իրողությունը, որ օսմանյան պետությունը, հակառակ Բեռլինի դաշնագրով ստանձնած պարտավորությունների, իրականում արագացնում է հայերին տնտեսապես հյուծելը, նրանց հողագրկելը և վերջնականապես թշվառացնելը:

Ուշագրավ են Հայկակի ծանոթություններն ու մեկնաբանությունները Կ. Պոլսի «Արևելք» օրաթերթի և նրա բովանդակության վերաբերյալ: Լինելով այդ թերթի խմբագիրներից մեկը (բայց ոչ նրա վարչության անդամ)¹⁵ նա «Մշակում» դրականորեն է արտահայտվում նրա 1884—1886 թթ. գործունեության մասին, դրվատում թերթի ազատամիտ ուղղությունն ու լայնախոհությունը:

«Մշակի» ընթերցողների համար բոլորովին նոր, իմացական տեսակետից անժանոթ աշխարհ է բացում Հայկակը, երբ նրանց իրազեկում է թուրքական մամուլի գրեթե ընդհանրական դարձած՝ հայերի և Հայկական հարցի հանդեպ թշնամանքի ու ատելության ոգով քարոզչության մասին: Ի դեպ, թուրքական մամուլը իր այսպիսի վերաբերմունքի և դրանից բխող քարոզչության ուժով նշանակալիորեն նպաստում էր թուրք հան-

¹⁴ Նույն տեղում, 15 մարտի 1880 թ.:

րությանը՝ 1880-ական թթ. կոտորածներին նախապատրաստելու և նրան այդ սպանդի մասնակիցը դարձնելու գործընթացին՝ ենթարկելով նրան հոգեբանական մշակման և որը, իր հերթին, նախադուռ էր դառնալու ավելի ուշ՝ հայերի զանգվածային կոտորածների ու ցեղասպանության համար: Հենց այս՝ հայերի համար ոչ նպաստավոր հետևանքների վերացմանը և դրան հակառակ՝ հայերին սատարող հրատարակություն ստեղծելուն էր հետամտում Հայկակը՝ առաջարկելով Թիֆլիսում հիմնադրել եվրոպական լեզվով մի պարբերական, որը «կրճա եվրոպական զաղափարներն ի նպաստ մեզ մշակել»: Նա առաջարկում էր «Մշակին»՝ նախաձեռնել այդ կարևոր գործը:

1882 թ. Արփիարյանն արդեն առաջարկում է համագործակցել ճանաչում գտած որևէ եվրոպական թերթի հետ՝ պարբերաբար այնտեղ հայամպաստ նյութեր տպագրելու նպատակով: Նա հարմար էր դատում այս գործում սուլթանի կիրառած քաղաքականությանը հակադրել նրա իսկ զենքերը. Աբդուլ Համիդը արտակարգ կարևորություն էր տալիս եվրոպական թերթերի միջոցով եվրոպայում ցրել թուրքերի և անձամբ իր մասին գոյացած աննպաստ հասարակական կարծիքը՝ այդ գործում չվարանելով նյութական միջոցներ շռայլելուց: Թուրքերն այս նպատակով վարձել էին մի քանի եվրոպական թերթեր, թղթակիցներ, Կ. Պոլսում ֆրանսերեն և թուրքերեն հրատարակում էին հրատարակվող «Օսմանլը» թերթը: Սուլթանն իր անձնական միջոցներից ամսական 2 հազար ռուբլու չափով դրամ էր հատկացնում համակիր ֆրանսերեն մեկ այլ թերթի և այլն: Հայկակն առաջարկում էր, որպես այդպիսի հայամպաստ հրատարակություն, նկատի առնել Վիեննայում հրատարակվող «Ժուռնալ դ'Օրիան» թերթը, որը հակումներ էր ցուցաբերել քննադատելու հայերի հանդեպ Բ. Ղազն քաղաքականությունը:

Արփիարյանի թղթակցությունները «Մշակում» հատկապես 1880-ական թթ. առանձնանում էին իրենց լրատվական կարևոր արժեքի շնորհիվ: Արևմտահայերն առավել բացահայտ և շիտակ վերլուծումների մեջ տեսնում էին իրենց իսկ կացությունն ու խնդիրները: Սրանում է, անկասկած, «Մշակ» լրագրում Արփիարյան-Հայկակի թղթակցությունների ազգային նշանակությունը:

ГАЯНЕ СОГОМОНЯН

кандидат филологических наук

**АРПИАР АРПИАРЯН – КОРРЕСПОНДЕНТ
ГАЗЕТЫ “МШАК”**

РЕЗЮМЕ

С 1878-го по 1890-й год западноармянский публицист, писатель и общественный деятель Арпиарян являлся корреспондентом газеты “Мшак”, издаваемой Григором Арцруни. В своих материалах Арпиарян освещал множество проблем, являющихся злободневными для константинопольской армянской общины. С присущим ему мастерством публициста А. Арпиарян обсуждал на страницах газеты вопросы общественной жизни Константинополя и Западной Армении в целом. Его публицистические статьи, подписанные псевдонимом “Айкак”, являя собой огромную познавательную ценность, содействовали сближению восточно-армянской и западноармянской действительности.

ARPIAR ARPIARYAN – "MSHAK'S"
CORRESPONDENT

SUMMARY

In 1878–1890s the Western Armenian publicist, writer and public figure A. Arpiaryan contributed to Gr. Artsruni's newspaper "Mshak". In his articles A. Arpiaryan touched many urgent problems of the Western Armenian life concerning Constantinople's Armenian community, its cultural and public life, as well as the realities of Western Armenia. His articles, bearing his signature "Haikak", have great cognitive significance, contributing to the union of the Armenians in Western and Eastern Armenia.